## UNUSUNCAUPUU AUSNS AHTUHUUSHU UUTCHAUSH UPTTUSTUU BTUH WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

Archbishop Moushegh Mardirossian, Prelate

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



#### *ՅԻԼՐԸՆԿԱԼՈԼԹԵԱՄԲ ԱՐԵԼՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՁԳԱՅԻՆ ԱՈԱՁՆՈՐԴԱՐԱՆԻՆ*

### ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՐ ԵՐ ՔԱՆԱՏԱՅԻ ԿԻԼԻԿԵԱՆ ԵՐԵՔ ԹԵՄԵՐՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՐ ԵՐ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՐԹԵԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՐՑԻՉՆԵՐՈՐ ՄԻԱՏԵՂ ԺՈՂՈՎ

Մասնակցութեամբ Մեծի Տաևև Կիլիկիոլ Կաթողիկոսութեան Միացեալ Նահանգներու եւ Քանատայի Թեմերու Առաջևորդներուն, **U**aawihu Կեդրոնական Վարչութեան **U**aawihli եւ Վարչութեանց ներկայացուցիչներուն, Երեքշաբթի. 11 Սեպտեմբերին, ազգային Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ միատեղ ժողով մր, քննարկելու եւ ծրագրելու համար միացեալ աշխատանքներ։

ժողովին կը մասնակցէին Բարձր. Տ. Օշական Արք. Չօլոյեան, Առաջնորդ Արեւելեան Թեմի, Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան՝ Առաջնորդ Արեւմտեան Թեմի եւ Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեան՝ Առաջնորդ Քանատայի Թեմի, Արեւմտեան Թեմի Կրօնական Ժողովի ատենապետ Գերպ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, Ազգային Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Տիար Խաժակ Տիքիճեան, Արեւելեան Թեմի Ազգ. Վարչութեան ատենապետ Տիար Ճէք Մարտոյեան եւ Արեւմտեան Թեմի Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան։ Աւելի ուշ, ժողովին միացաւ նաեւ Կրօնական Ժողովի փոխ ատենապետ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան։

#### **4000**

Ժողովի բացումեն առաջ, ներկաները աղօթքի պահ մը ունեցան Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն մատրան մեջ. յատուկ յիշատակութեան արժանացան 2001ի 11 Սեպտեմբերին Նիւ Եորքի, Ուաշինկթընի եւ Փենսիլվանիայի վրայ կատարուած ծանօթ յարձակումներուն զոհերը։ Դեպքին 6րդ տարեդարձն էր այդ օրը։

#### ժՈՂՈՎԸ

Ժողովին առաջին նիստը բացուեցաւ ժամը 11:30ին։ Օրակարգի հիմնական հարցերն էին երեք Թեմերուն միջեւ գործակցութեան դաշտերն ու հասարակաց ծրագիրները, մանաւանդ որ յառաջիկայ տարի պիտի նշուի ամերիկեան այս ափերուն, Յայց. Առաքելական եկեղեցւոյ հաստատման 110ամեակը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմի հաստատման 50րդ տարեդարձը, Արեւմտեան Թեմի 35րդ եւ Քանատայի Թեմի 7րդ տարեդարձները։ Այս նպատակով, երեք թեմերուն մէջ տեղի պիտի ունենան յոբելենական հանդիսութիւններ ու ձեռնարկներ, որոնք կը կարօտին համակարգումի ու սերտ գործակցութեան։

Ժողովը հանգամանօրէն քննարկեց յիսնամեակի տօնակատարութեան ու այդ նպատակով համապատասխան ծրագիրներ մշակելու հարցը, որոնց մասին տուաւ համապատասխան որոշումներ։

Ժողովը իբրեւ առաջնորդող ուղեցոյց իր տրամադրութեան տակ ուներ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին կողմե նոյնինքն այս ժողովին առիթով Առաջնորդ Սրբազաններուն ուղղուած նամակը, ուր Վեհափառ Յայրապետը կը թելադրեր կեդրոնանալ յատկապես կրօնական ու հայեցի դատրիարակութեան, երիտասարդական հաւաքներու կազմակերպման եւ յառաջիկալ տարի տեղի ունենալիք միւռոնօրինեքին վրալ։:

Առաջին հերթին խօսք առին երեք թեմակալ Առաջնորդները, որոնք վեր առին այս ու նմանօրինակ ժողովներու կարեւորութիւնը։ Նշուեցաւ, որ անոնք արդեն ունեցած են ժողովներ ու հաղորդակցութիւններ, սակայն երեք թեմերու ներկայացուցիչներու մասնակցութեամբ առաջին ժողովն է ասիկա։ Խօսք առին նաեւ Ազգ. Կեդրոնական ու թեմական վարչութեանց ներկայացուցիչները, որոնք շեշտը դրին միացեալ ծրագիրներ գործակցաբար յառաջ տանելու կարեւորութեան վրայ։

Ժողովը քննարկեց հրատարակչական այն ծրագիրները, որոնք կ'իրականանն երեք թեմերուն միջեւ գործակցութեամբ։ Արդէն իսկ լոյս տեսած են Նոր Կտակարանն ու Սաղմոսներու հատորը, իսկ պատրաստութեան ընթացքի մէջ են Ս. Պատարագի արարողութիւնը ընդգրկող հատորն ու հոգեւորկանաց առձեռն ուղեցոյցի նոր հրատարակութիւնը։

Ուսումնական ու դաստիարակչական ծրագիրներու քննարկումեն առաջ, ժողովը արձանագրեց հետեւեալները.

- Վեհափառ Յայրապետին Միացեալ Նահանգներ անցեալ Դեկտեմբերի այցելութեան առիթով սկիզբ առած միջ-թեմական երիտասարդական աշխատանքները ընթացքի մէջ են, անհրաժեշտ է յաւելեալ մղում տալ ու սերտացնել այս մարզին մէջ գործակցութիւնը։
- Նկատի ունենալով, որ յառաջիկայ տարի, 2008ի Օգոստոս 13էն 20ին, Անթիլիասի մէջ նախատեսուած է համաթեմական երիտասարդական հաւաք մը, երեք թեմերը այս ուղղութեամբ այժմէն իսկ պիտի ձեռնարկեն աշխատանքի, որպէսզի երեք շրջաններէն ալ երիտասարդներ ներկայ ըլլան այդ համախմբումին։
- Նկատի ունենալով, որ նմանապես յառաջիկայ տարի, 2008ի Յունիս 7ին, Անթիլիասի մեջ տեղի պիտի ունենայ Սրբալոյս Միւռոնի օրինութիւն, ձեռամբ՝ Վեհափառ Յայրապետին, երեք թեմերուն մեջ պիտի ձեռնարկուի նախապատրաստական աշխատանք, որպեսզի դեպի Անթիլիաս ուխտագնացութիւնը լաւ կազմակերպուի ու առաւելագոյն թիւով հաւատացեալներ օգտուին այս պատմական առիթեն։

#### ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Ժողովը օրակարգի վրայ ունէր երեք թեմերուն մէջ կրօնական ու հայեցի դաստիարակութեան հարցերը, որոնց քննարկումը տեղի ունեցաւ ճաշի դադարէն ետք։

Խորհրդակցութեան ու քննարկման նիւթ եղան Կրօնական ու հայեցի դաստիարակութեան գծով ներկալացուած զեկուցումներ ու ծրագիրներ։ Յատուև կարեւորութեամբ վեր առնուեցաւ pրիստոնեական դաստիարակութեան աշխատանքներու դաշտը, որ կ'րնդգրկէ կիրակնօրեալ Գրային սերտողութեան hանդիպումները: Ժողովականները մասնաւորաբար ծանրացան կիրակնօրեալ դպրոցներու համար, լատկապէս այս ափերուն հասակ առնող սերունդներու կարիքները գոհացնող դասագիրբերու, ինչպէս նաեւ ուսուցիչներու պատրաստութեան անիրաժեշտութեան վրալ։ Ժողովը անիրաժեշտ գտաւ, որ իւրաբանչիւը թեմ ունենալ դաստիարակչական հարցերու սահմանուած լանձնախումբ մր, որ ի մի բերէ մտահոգութիւններն ու ծրագիրները։

Ժողովը նաեւ քննարկեց միջ-թեմական երիտասարադական հանդիպումները յաճախակի դարձնելու եւ անոնց կազմակերպ ընթացք տալու հարցը։ Նկատի առնուեցաւ, որ միջ-թեմական երիտասարդական համագումարներ տեղի ունենան երկու տարին անգամ մը ու այս ծրագիրին իրագործումը վստահուի լատուկ յանձնախումբերու։

Ժողովի վերջին բաժինով, խորհրդակցութեան նիւթ եղան վարչական ու աշխատանքային այն հարցերը, որոնք կ'առնչուին երեք թեմերուն հասարակաց ծրագիրներու։

Ժողովը վերահաստատեց այն համոզումը, թէ նման հանդիպումներ մեծապէս օգտակար են փորձառութեանց փոխանակման ու միացեալ ծրագիրներու մշակման, ինչպէս նաեւ Կիլիկեան Ս. Աթոռի առաքելութիւնը արդիւնաւոր կերպով լառաջ տանելու համար։

#### HOSTED BY THE WESTERN PRELACY

# MEETING OF THE PRELATES, CENTRAL EXECUTIVE AND EXECUTIVE COUNCIL REPRESENTATIVES OF THE THREE CILICIAN PRELACIES OF UNITED STATES AND CANADA

The Prelates of the Western United States, Eastern United States, and Canada, a representative of the Central Executive Council of the Catholicosate of Cilicia, and representatives of the Executive Councils of the three Prelacies held a joint meeting on Tuesday, September 11, at the offices of the Western Prelacy, in order to examine and plan joint programs.

Participating in the meeting were: His Eminence Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern Prelacy; His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate of the Western Prelacy; His Eminence Archbishop Khajag Hagopian, Prelate of the Prelacy of Canada; Very Rev. Fr. Muron Aznikian,

chairman of the Religious Council (Western Prelacy); Mr. Khajag Dikijian, Central Executive Council representative; Jack Mardoian, Esq., chairman of the Executive Council of the Eastern Prelacy; and Dr. Garo Agopian, chairman of the Executive Council of the Western Prelacy. Participating in the meeting later in the day was Very Rev. Fr. Bartev Gulumian, vice chairman of the Religious Council (Western Prelacy).

#### PRAYER SERVICE

Prior to the formal opening of the meeting, a prayer service took place in the Sts. Drtad and Ashken Chapel, with special remembrance of the victims of the attacks that took place exactly six years ago on September 11, 2001, in New York, Washington, and Pennsylvania.

#### **MEETING**

The first session of the meeting convened at 11:30 a.m. The major items on the agenda concerned joint projects, especially because next year is the 110<sup>th</sup> anniversary of the Armenian Church in America, and the 50<sup>th</sup> anniversary of the Prelacy under the jurisdiction of the Catholicosate of Cilicia. Next year is also the 35<sup>th</sup> anniversary of the Western Prelacy and the 7<sup>th</sup> anniversary of the Canadian Prelacy. In light of these anniversaries, all three North American Prelacies are planning celebrations that require coordination and diligent work.

The meeting participants thoroughly studied the upcoming 50<sup>th</sup> anniversary. They discussed proposed plans and made decisions relative to this anniversary.

Guiding the participants was a letter from His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia, who advised the three Prelates to centralize their efforts in the field of religious and national education, youth gatherings, and the Blessing of the Holy Muron which will take place next year in Antelias.

The three Prelates each expressed their thoughts, and praised the importance of this and future similar meetings. It was noted that although the Prelates have previously met, this was the first meeting of the Prelates with representatives of each Council. The representatives of the Central Executive Council and the Executive Councils expressed their views and agreed on the importance of united joint endeavors.

The meeting reviewed the list of joint publications and noted that the New Testament and Psalms are already published, and the new Devine Liturgy Pew Book and the Clergy Handbook are being prepared.

Before discussing educational matters, the meeting participants made note of the following:

- 1. Vehapar's visit last December began an inter-Prelacy effort for youth gatherings. It is imperative to give further effort and make plans in this area.
- 2. An international youth gathering will take place in Antelias, August 13-20, 2008. The three Prelacies must work to encourage participants from all areas.

3. Next year, on June 7, 2008, His Holiness Aram I, will bless the Holy Muron in Antelias. The three Prelacies will develop and organize plans to encourage large numbers of the Faithful to join in pilgrimages to Antelias on this historic occasion.

#### **EDUCATIONAL PROGRAMS**

After a lunch break, the participants continued their meeting with discussions centered on religious and national education questions.

Discussed were: Current religious and national educational programs, with special attention to texts for Christian education for use in Sunday schools, especially for those children who have been raised in North America, and the need to prepare teachers. The participants felt it vital that each Prelacy form a committee in order to bring forward concerns and plans in the field of education.

The participants also discussed the question of inter-Prelacy youth gatherings, the importance of regular gatherings and the question of organizing the youth. It was suggested that inter-Prelacy youth gatherings take place every two years and to delegate this program to a special committee.

The final portion of the meeting was devoted to questions connected to the general programs of the three Prelacies.

The participants reiterated their belief that such meetings are very helpful for the exchange of experience and ideas, and the cultivation of joint programs, as well as the advancement of the mission of the Holy See of Cilicia in a productive manner.